ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

04.09.2013թ.
210-1

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային
ոստիկանության պետ
պարոն Արսեն Գալստյանին

Տեղեկություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Գալստյան,

Իրեն դիմած քաղաքացի Ժիրայր Սուքիասյանին տեղեկատվություն ստանալու հարցում օգնելու համար 2013թ.-ի օգոստոսի 15-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր թիվ 206-ի 5 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել Երեւան քաղաքում տեղադրված տեսախցիկներից մեկի՝ 08.07.2013թ.-ին կատարած տեսագրության հատված: Ի պատասխան՝ ՀՀ ՃՈ-ից ստացվել է գրություն, ըստ որի՝ խնդրված տեսագրությունը տրամադրել հնարավոր է բացառապես հասցեատիրոջը (տվյալ դեպքում՝ Ժիրայր Սուքիասյանին) կամ նրա լիազոր ներկայացուցչին:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ոչ կառավարական կազմակերպություն է (հասարակական կազմակերպություն), որի կանոնադրական գործառույթները, նպատակներն ու խնդիրներն են՝ ի թիվս այլոց

- Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացման նպաստելը,
- Մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը, տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը, կրթվելուն նպաստելը,
- Մարդկանց իրավաբանական եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն աջակցելը:

Այսպես, իր կանոնադրական՝ մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության նպատակն ԻԱԿ-ն ապահովում է նաեւ քաղաքացիների համար տեղեկություն ստանալու հարցումներ պատրաստելով եւ տեղեկություն տնօրինողներին ներկայացնելով: Ավելի քան 10 տարի է, ԻԱԿ-ը ՀՀ քաղաքացիների խնդրանքով դիմել է տեղեկություն տնօրինող տարբեր մարմինների եւ բոլոր դեպքերում ստացել է ըստ էության պատասխան՝ տրամադրված տեղեկություն, մերժում, հրում, բովանդակային առումով թերի պատասխան եւ այլն:

Ուստի, ԻԱԿ-ի կողմից այլ անձանց համար տեղեկություն ստանալու հարցումներով տեղեկություն տնօրինողներին դիմելը իրավաչափ է եւ բխում է ԻԱԿ-ի կանոնադրական եւ յուրաքանչյուրի՝ տեղեկատվության ազատության սահմանադրական իրավունքներից:

Ժիրայր Սուքիասյանի կողմից մեզ դիմելու փաստը հիմնավորել ենք նախորդ՝ 2013թ.-ի օգոստոսի 15-ի թիվ 206-ի 5 հարցմանը կից ներկայացված փաստաթղթերով:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել ք. Երեւանում տեղադրված տեսախցիկի կողմից 08.07.2013թ.-ին ժամը 19:33-ին կատարած եւ ՀՀ ՃՈ 19.07.2013թ.-ի թիվ 1300763392 որոշման հիմքում դրված տեսագրությանը նախորդող 5 եւ հաջորդող 25 րոպեների տեսագրությունները (նույն տեսախցիկի): Տեսանյութը խնդրում ենք ուղարկել ԻԱԿ-ի foi@foi.am էլեկտրոնային հասցեին կամ Ժիրայր Սուքիասյանի <gerard sukiasyan> 1203866@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իավաբան Գեւորգ Հայրապետյան